Շամախուց՝ Գեր. Սրբազան Մեսրոպ եպիսկոպոս 25 ր. եւ առանձինն՝ 15 ր. Պ. Սեդրակ Դատեանց 10 ր.

Սալեանից՝ Պ. Բժ. Գաբրիէլ Յովհաննիսեանց 10 ր.

Տփխիսից՝ Պ. Եփրեմ Տատուրեանց 10 ր. Պ. Առաքել Վարդապետեանց 10 ր.

### Իբրեւ նուէր ստացուած են նաեւ գրքեր.

Ս. Էջմիածնից՝ Պ. Սեդրակ Մանդինեանից՝ իւրեն աշխատութիւններից 8 օրինակ. Պ. Կարապետ Կոստանեանից՝ իւրեն աշխատութիւններից՝ 14 օրին. Պ. Յովհաննէս Յովհաննիսեանից՝ բանաստեղծութիւններ՝ 10 օրին.

Ս. Պետերբուրգից՝ Գնդապետ Պ. Սարգիս Իւզբաշեանցից 60 օր. Ռուսերէն եւ Հայերէն գրքեր.

Տփխիսից՝ Պ. Գէորգ Բիւրքճեանից մի օրին. Անւոյ առերակների ժողովածու.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

### ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ՝ ԱՐՁԱԿԵԼՈՑ ԵՂՆԹԱՑՍ 1890 ԱՄԻ.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 10 Ներկայ Յունուարի համարաւ 5, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն եկեղեցական-ծխական երկդասեան տղայոց ուսումնարանին Հայոց Բագու քաղաքի՝ Բարեկրօն Խորէն աւագ քահանայն Միրզաբէկեանց, երեցփոխանն Ս Լուսաւորիչ եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Պետրոսն Տէր Մարկոսեան և Բօղդանն Դոլուխանեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Աղէքսանդրն Նաջարեանց և Բագրատն Շիեանց, վասն եկեղեցական—ծխական երկդասեան օրիորդաց ուսումնարանի այնր քաղաքի՝ Բարեկրօն Գրիգոր քահանայն Գրիգորեանց, երեցփոխանն Ս. Աստուածածնի եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Սարգիսն Վարշամեանց և Հայրապետն Քոչարեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց պատուելիք՝ Աստուածատուրն Կաճկաճեանց և Գրիգորն Թումաեանց, վասն եկեղեցական—

ծխական միդասեան տղայոց ուսումնարանին Հայոց Դարբանդ-քաղաքի՝ Բարեկրօն Աբրահամ քահանայն Սպանդունի, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելի Մովսէսն Ռուստամեան, իսկ ի պաշտօն անձնափոխանորդի՝ պատուելի Մարգարն Սարուխանեանց և վասն եկեղեցական — ծխական երկդասեան տղայոց ուսումնարանին Հայոց Ղուբայ քաղաքի՝ Բարեկրօն Աւագ քահանայն Աւշարեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Նիկողայոսն Բաբաեան Բաշխթրեանց և Յարութիւնն Տէր Գրիգորեան Մելիք-Դադայեանց, իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Ջումշուտն Յարութիւնեան Բարսղեանց և Իվանն Ղահրամանեան Բօղդանեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 16 ամսոյ համարաւ 6, որով շնորհեցան իրաւունք Առաջնորդին Հայոց Շամախւոյ Բարձր — Սրբազան Մեսրոպ Արքեպիսկոպոսի բանալոյ ի Գանձակ գեղջ իւրոյ վիճակի զկենդրոնական եկեղեցական — ծխական միդասեան տղայոց ուսումնարան և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն այնորիկ ուսումնարանին՝ Բարեկրօն Ստեփաննոս քահանայն Գանձակ գեղջ, երեցփոխանք եկեղեցեաց Գանձակ և Թոփիշէն գիւղօրէից. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Գրիգորն Յարութիւնեան և Խաչատուրն Յարութիւնեան։

—

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 13 ամսոյ համարաւ 23, յանուն հաւատարիմ երեցփոխանի Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցւոյն Հայոց Աստրախան քաղաքի Յարգելի Մարտիրոսի Կարապետեան Գոսփինցեանց վասն նորոգելոյ նորա սեպհական ծախուք իւրովք զերկոսին սեղանս այնր եկեղեցւոյ։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 23 ամսոյ համարաւ 32, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն եկեղեցական — ծխական միդասեան տղայոց ուսումնարա-

նին Հայոց Պօղոս—քիլլիսայ գեղջ՝ Բարեկրօն Կարապետ քահանայն Թումանեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելի Միքայէլն Անանեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդի՝ պատուելի Սարգէսն Ալիխանեանց։

---

## ՔԱՂՈՒԱԾՔ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

29 Նոյեմ. 1889. Սինոդն Ս. Էջմիածնի, ի մասին առանց հրամանի պսակման Ներսէս քահանայի Տէր Յարութիւնեանց Մերզիկ գեղջն Գանձակայ, զԲանանցեցի Պետրոսն Վիրապեան, ընդ ծխականի իւրոյ Մարգարտի Յովհաննիսեան, ի հինգերորդ աստիճանի խնամութեան նոցին՝ և ի մասին ոչ ածելոյն ի յայտ ծխական քահանայի Կիլաւայացւոյն Տէր Անդրէասայ Տէր Միքայէլեան, ի յայտարարութեան իւրում գաղտնական խնամութեննէն՝ զառաջին զՆերսէս քահանայն ենթարկեաց երկամեայ ապաշխարանաց ի վանս Հաղբատայ, և զվերջինն զԱնդրէաս քահանայն՝ տուգանաց երեսուն րուբլոյ։

—

13 Դեկ. 1889, Սրբազան Սինոդն հրամայեաց վիճակային Կոնսիստորիային Հայոց Տփխիսոյ յանդիմանել զՍիմէօն քահանայն Մանդէնեանց Կրիմսկի գեղջն վիճակին Վրաստանի՝ ի զգուշութիւն նորա և այլոց, սակս պսակելոյն նորա զանչափահաս 15 ամեայ օրիորդն Վարդուհի Քէշիշեանց Կերչեցի, ընդ համբնակցին Յովսէփայ Զօպունեանց, որք ոչ են ծխականք իւր, և որք դիմեալ են առ նա ծածկաբար, սակս չ՝ պսակելոյն զնոսա ծխատէր քահանայն իւրեանց, իսկոյն.

—

13 Դեկ. Միաբան սուրբ Մինաս եկեղեցւոյ Նուխի քաղաքի Աւագ քահանայն Տէր Աւագեանց, յաղագս կատարելոյն, առանց թոյլտուութեան հոգևոր կառավարութեան տեղւոյն՝ ըզպսակն նոյն քաղաքացի Գրիգորի Յովհաննիսեան, ընդ նոյն քա-